ԹՈՂԱՐԿՄԱՆ ՎԵՐՋՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ[1]

«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

թողարկողի անվանումը

Անժամկետ, անվանական, արժեկտրոնային, ոչ փաստաթղթային, պարտատոմս

արժեթղթի տեսակը

Թողարկողի և թողարկվող արժեթղթերի վերաբերյալ ամբողջական տեղեկատվության ձեռքբերման համար անհրաժեշտ է համատեղ դիտարկել ծրագրային ազդագիրը (գրանցված է 26.11.2025թ. թիվ 1/427 Ա որոշմամբ) և Ծրագրայի ազդագրի լրացումները և սույն թողարկման վերջնական պայմանները: Ծրագրային ազդագիրը գտնվում է «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ-ում, հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0025, Չարենցի 12, թիվ 53, 1-5:

Ընդհանուր տեղեկություններ (Այն տեղեկությունները, որոնք կիրառելի չեն, նշվում է «ոչ կիրառելի»: Եթե միևնույն սերիայի ներքո տարբեր հիմնական պայմաններով (թողարկման արժույթ, առաջարկի գին, անվանական արժեք և այլն) արժեթղթեր են թողարկվում, ապա յուրաքանչյուր պայմանին բավարարող արժեթղթերի խմբի համար տարբերվող պայմանները ներկայացվում են տարանջատված:)		
1.	Թողարկողը (թողարկողի անվանումը)	«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ
2.	Երաշխավորողը	Թողարկողը չի նախատեսում ներգրավել երաշխավոր
3.	Սերիան (տվյալ ծրագրային ազդագրի հիման վրա իրականացվող հերթական թողարկման համարը և տարեթիվը	Սերիա 4, 2026
4.	Տվյալ սերիայի թողարկման ընդհանուր ծավալը	9,000,000,000 (ինը միլիարդ) ՀՀ դրամ
5.	Արժեթղթերի դասակարգման մասին տեղեկատվություն՝ թողարկողի պարտավորությունների մարման հերթականության տեսանկյունից (ստորադասությունը), ներառյալ՝ տվյալ սերիայի ներքո յուրաքանչյուր թողարկման ծավալը՝ ըստ ստորադասության	Բանկի լուծարման դեպքում անվանական անժամկետ պարտատոմսերի սեփականատերերի պահանջները (այդ թվում՝ տոկոսների գծով) ենթակա են բավարարման Բանկի մյուս բոլոր պահանջատերերի պահանջները բավարարվելուց հետո, բացառությամբ Բանկի սովորական բաժնետերերի պահանջների: «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձանց ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքի համաձայն Բանկի լուծարման դեպքում անվանական անժամկետ պարտատոմսերի սեփականատերերին վճարումները կատարվում են նույն օրենքի 31-րդ հոդվածով սահմանված հերթականությամբ: Ընդ որում՝ անվանական անժամկետ պարտատոմսերի ամբողջ գումարը, նախքան նույն օրենքով անվճարունակ ճանաչվելը, Ազդագրում սահմանված կարգով Բանկի կանոնադրական կապիտալի համալրմանն ուղղված

[1] Պարտատոմսերի թողարկման, տեղաբաշխման, շրջանառության ու մարման վերջնական պայմանները ենթակա են որոշման Թողարկողի Խորհրդի կողմից: Արժեթղթերի յուրաքանչյուր թողարկման համար կազմվող թողարկման վերջնական պայմանները ՀՀ ԿԲ են ներկայացվում և հրապարակվում պարտատոմսերի յուրաքանչուր տրանշի տեղաբաշխումից առնվազն 2 (երկու) օր առաջ: Արժեթղթերի յուրաքանչյուր թողարկման վերջնական պայմանները Թողարկողը պարտավորվում է հրապարակել իր ինտերնետային կայքում: Արժեթղթերի յուրաքանչյուր թողարկման համար կազմվող թողարկման վերջնական պայմանները Թողարկողը/Տեղաբաշխողը պարտավորվում է հրապարակել իր ինտերնետային կայքերում:

		լինելու պարագայում, անժամկետ պարտատոմսերի սեփականատերերը համարվում են Բանկի սովորական բաժնետոմսերի սեփականատերեր և նրանց պահանջները բավարարվում են Բանկի մյուս մասնակիցների պահանջների բավարարման հիմքով:
6.	Թողարկման արժույթը	ՀՀ դրամ
7.	Առաջարկի գինը	Տեղաբաշխման ընթացքում և տեղաբաշխումից հետո պարտատոմսի գինը որոշվելու է հետևյալ բանաձևով. $$\mathrm{DP} = CP + FV \cdot \frac{C_t}{f} \cdot \frac{A}{E}$$ $$CP = \frac{FV \times (C_t/f)}{(y/f)} \times (1 + y/f)^{1-\tau} - FV \cdot \frac{C_t}{f} \cdot \frac{A}{E}$$ $$\tau = \frac{DSC}{E}$$ $$C_t = ReferenceRate_{t,reset} + Spread_t$$ FV - պարտատոմսի անվանական արժեքը, DP - պարտատոմսի ամբողջ գինը (ներառված կուտակված տոկոսագումարը), CP - պարտատոմսի մաքուր գինը (առանց կուտակված տոկոսագումարի), C_t - արժեկտրոնի տարեկան եկամտաբերությունը (%), y – տարեկան եկամտաբերությունը (%), f - արժեկտրոնի վճարման պարբերականությունը (4 – եռամսյակային), DSC - գործարքի կատարման օրից մինչև առաջիկա արժեկտրոնի վճարումը մնացած փաստացի օրերի թիվը, E - տվյալ փուլի փաստացի տևողությունն օրերով, A - նախորդ արժեկտրոնի վճարման օրից մինչև գործարքի կատարման օրը, փաստացի օրերի թիվը, իսկ առաջին արժեկտրոնի վճարման դեպքում՝ թողարկման օրից մինչև գործարքի կատարման օրը փաստացի օրերի թիվը, ReferenceRate – ուղենշային տոկոսադրույք (%), Spread – սահմանված տոկոսադրույք (%),
8.	Անվանական արժեքը	10,000 (տասը հազար) ՀՀ դրամ
9.	Քանակը	900,000 (ինը հարյուր հազար) հատ,
10.	Առաջարկի իրականացման սկիզբը (ներառյալ՝ ժամկետի ցանկացած հնարավոր փոփոխությունները)	26/05/2026թ
11.	Առաջարկի իրականացման ավարտը (ներառյալ՝ ժամկետի ցանկացած հնարավոր փոփոխությունները)	09/09/2026թ Եթե պարտատոմսերն ամբողջությամբ տեղաբաշխվում են մինչ այդ ամսաթիվը, ապա առաջարկի իրականացման ավարտի օր է հանդիսանում վերջին պարտատոմսի վաճառքի օրը:

12.	Արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը (ISIN) կամ այլ նմանատիպ տարբերակիչ ծածկագիր	AMUNIBBM3ER5
13.	Թողարկման և տեղաբաշխման վերաբերյալ որոշում ընդունած իրավասու մարմինը և որոշման ամսաթիվը	24.10.2025թ, 05.12.2025թ, 11.05.2026թ և 15.06.2026թ Բանկի Խորհրդի որոշումներ
Արժեկտրոնի վերաբերյալ տեղեկություններ		
14.	Արժեկտրոնի հաշվարկման առաջին օրը	26/05/2026թ
15.	Արժեկտրոնի տոկոսադրույքը և վճարման պարբերականությունը, եթե արժեկտրոնի տոկոսադրույքը լողացող է, ապա ներկայացնել տեղեկատվություն, թե ինչ ցուցանիշից (դրա փոփոխությունից) է կախված տոկոսադրույքի մեծությունը, և որտեղ կարելի է ստանալ այդ ցուցանիշի/դրա փոփոխության մասին տեղեկատվություն	**Անժամկետ պարտատոմսերի տարեկան արժեկտրոնային տոկոսադրույքը հաշվարկվելու է հետևյալ կարգով՝** ա. Շրջանառության առաջին 36 ամիսների ընթացքում՝ հաստատագրված տարեկան **13.25%** բ. Շրջանառության առաջին 36 ամիսների ավարտից հետո՝ յուրաքանչյուր կիսամյակի համար սահմանվում է տարեկան արժեկտրոնային տոկոսադրույք՝ ընթացիկ կիսամյակի սկզբին նախորդող օրվա դրությամբ հրապարակված ՊՊ եկամտաբերության կորի՝ 6 ամիս ժամկետայնության համար հաշվարկված մինչև մարում եկամտաբերությանը (average yield to maturity) գումարելով Բանկի Խորհրդի կողմից թողարկման որոշմամբ սահմանված հավելյալ 6% (spread): **Արժեկտրոնի վճարման պարբերականությունը՝ կիսամյակային** ՊՊ եկամտաբերության կորի՝ 6 ամիս ժամկետայնության համար հաշվարկված մինչև մարում եկամտաբերությունը հրապարակվում է ԿԲ պաշտոնական կայքէջի «ՊՊ եկամտաբերության կորեր» բաժնի «Եկամտաբերության կոր և պարտատոմսերի գների վերաբերյալ տեղեկատվություն (Օրական)» ենթաբաժնում (ՊՊ եկամտաբերության կորեր | CBA): Լողացող տոկոսադրույքի հիմքում ընկած ցուցանիշի նկարագրությունը ներկայացված է Ծրագրային ազդագրի 2.3.8՝ Արժեկտրոնի տոկոսադրույքը և դրա վճարման պայմանները բաժնում:
16.	Արժեկտրոնի վճարման հստակ օրերը (օր, ամիս, տարի)	Արժեկտրոնի վճարման օր է հանդիսանում յուրաքանչյուր տարվա մայիսի 26-ը և նոյեմբերի 26-ը:

		Արժեկտրոնի վճարումները կատարվում են արժեկտրոնի հաշվարկման օրերին՝ բացառությամբ այն դեպքերի, երբ արժեկտրոնի հաշվարկման օրը ոչ աշխատանքային օր է. նման դեպքում արժեկտրոնը վճարվում է արժեկտրոնի հաշվարկման օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը:
17.	Արժեկտրոնի օրերի հաշվարկման կարգը (օրինակ 30/360, Act/Act, Act/360 և այլն)	Act/Act
18.	Լողացող արժեկտրոնի հաշվարկն իրականացնողը	«Յունիբանկ» ԲԲԸ
19.	Արժեկտրոնի հաշվարկման այլ էական Պայմաններ	- Պարտատոմսերի շրջանառության 36-րդ ամսվա ավարտից հետո Թողարկողը յուրաքանչյուր ընթացիկ կիսամյակի սկզբին նախորդող օրը սահմանում է տարեկան նոր արժեկտրոնային տոկոսադրույք սույն վերջնական պայմանների 15-րդ կետով սահմանված կարգի համաձայն: - Եթե ընթացիկ կիսամյակի սկզբին նախորդող օրը ոչ աշխատանքային օր է, ապա արժեկտրոնային տոկոսադրույքի հաշվարկման հիմք է ընդունվում այդ օրվան նախորդող առաջին աշխատանքային օրը: - Հաշվարկված տոկոսադրույքը կլորացվում է ստորակետից հետո երկրորդ նիշի ճշտությամբ՝ հիմք ընդունելով երրորդ նիշի արժեքը (0–4 դեպքում երկրորդ նիշը մնում է անփոփոխ, 5–9 դեպքում՝ ավելանում է մեկ միավորով), և կիրառվում է հաջորդող ժամակահատվածի (եռամսյակի/կիսամյակի) ընթացքում պարտատոմսերի գնի հաշվարկման և տվյալ ժամանակահատվածի արժեկտրոնի վճարման համար: - Հաշվարկված արժեկտրոնային տոկոսադրույքը էական փաստեր և տեղեկություններ պարունակող հաշվետվության տեսքով մինչև տվյալ արժեկտրոնային տոկոսադրույքի հաշվարկման օրվա ժամը 17:00 կներկայացվի Հայաստանի ֆոնդային բորսա ԲԲԸ և Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկ և մինչև նույն աշխատանքային օրվա ավարտը կհրապարակվի Թողարկողի պաշտոնական ինտերնետային կայքում (www.unibank.am): Բորսան ստացված տվյալները մուտքագրում է առևտրային համակարգ նույն աշխատանքային օրվա ընթացքում՝ ապահովելով դրանց հասանելիությունը հաջորդ առևտրային նստաշրջանի մեկնարկից: Ընդ որում, եթե Թողարկողը նշված ժամկետներում Հայաստանի ֆոնդային բորսա չի ներկայացնում հաշվարկված լողացող արժեկտրոնային տոկոսադրույքը, ապա ընթացիկ ժամանակահատվածի համար Բորսան շարունակում է կիրառել նախորդ

		ժամանակահատվածում գործող արժեկտրոնային տոկոսադրույքը: - Սույն կետի իմաստով կիսամյակ է համարվում պարտատոմսերի թողարկման օրվանից հաշվարկվող յուրաքանչյուր 6 (ամիսը) ամիսը:
20.	Զրոյական արժեկտրոնով (զեղչատոկոսային) արժեթղթերի վերաբերյալ դրույթ (նշվում է «կիրառելի» կամ «ոչ կիրառելի»)	ոչ կիրառելի
Մայր գումարի մարման վերաբերյալ տեղեկություններ		
21.	Մարման (մասնակի մարումների) ժամկետը	**Թողարկվող պարտատոմսերը անժամկետ են և թողարկման պահին չունեն սահմանված մարման ժամկետ:** Պարտատոմսերը կարող են մարվել միայն՝ • Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում, կամ • եթե մարման դեպքում ամբողջ գումարն ուղղվում է բանկի կանոնադրական կապիտալի համալրմանը՝ Բանկի սովորական բաժնետոմսերի տեսքով, կամ • եթե պարտատոմսերը մարվում կամ հետ են գնվում բանկի նախաձեռնությամբ, և պահպանվել են հետևյալ բոլոր պայմանները միաժամանակ. - պարտատոմսերը մարելու նպատակով Բանկը ստացել է ԿԲ նախնական համաձայնությունը, - պարտատոմսերի մարման ամսաթվի և միջոցների ներգրավման պայմանագրի ամսաթվի միջև տարբերությունը կազմում է առնվազն 5 օրացուցային տարի, - Բանկը վաղաժամկետ մարումներ իրականացնելու սպասումներ չի ձևավորել: Անժամկետ պարտատոմսերի մարման կարգը սահմանված է Ծրագրային ազդագրի 2.3.9 «Արժեթղթերի մարման ժամկետը» բաժնում
22.	Մարման (մասնակի մարումների) արժեքը, եթե հնարավոր չէ, ապա նշվում է հաշվարկման մեթոդաբանությունը	Անվանական արժեք
23.	Մարման արժեքի փոփոխությունը (լրացվում է այն բոլոր պայմանները, որոնց դեպքում հնարավոր է մարման արժեքի փոփոխություն)	ոչ կիրառելի
24.	Վաղաժամկետ մարման հնարավորություն թողարկողի	կիրառելի

	նախաձեռնությամբ/քոլ օպցիոն (նշվում է «կիրառելի» կամ «ոչ կիրառելի»)	
	1) Ժամկետ(ներ)ը	Պարտատոմսերը կարող են վաղաժամկետ մարվել միայն դրանց թողարկման պահից հաշվարկված 5-րդ (հինգերորդ) տարվա ավարտից հետո:
	2) Օպցիոնի իրականացման գինը, դրա հաշվարկման մեթոդը (առկայության դեպքում),	Անվանական արժեք
	3) Մասնակի մարման հնարավորության դեպքում՝ նվազագույն և առավելագույն մարման արժեքը	ոչ կիրառելի
	4) Այլ տեղեկություններ	Անժամկետ պարտատոմսերի վաղաժամկետ մարման կարգը սահմանված է Ծրագրային ազդագրի 2.3.9 «Արժեթղթերի մարման ժամկետը» բաժնում
25.	Վաղաժամկետ մարման հնարավորություն ներդրողի նախաձեռնությամբ/փութ օպցիոն (նշվում է «կիրառելի» կամ «ոչ կիրառելի»)	ոչ կիրառելի
	1) Ժամկետ(ներ)ը	
	2) Օպցիոնի իրականացման գինը, դրա հաշվարկման մեթոդը (առկայության դեպքում),	
	3) Այլ տեղեկություններ (տեղեկացման ժամանակաշրջանը)	
Տեղաբաշխման վերաբերյալ տեղեկություններ		
26.	Տեղաբաշխողի անվանումը, գտնվելու վայրը	ՅՈՒՆԻԲԱՆԿ ԲԲԸ, ՀՀ, ք. Երեւան, Չարենցի 12, թիվ 53,
27.	Տեղաբաշխման այլ պայմաններ	- Առկա են պարտատոմսերի ձեռքբերման գումարային սահմանափակումներ. ՀՀ դրամով թողարկվող պարտատոմսերի ձեռքբերման նվազագույն ծավալը կազմում է 1,000,000 ՀՀ դրամ: - Սույն վերջնական պայմաններով առաջարկվող անժամկետ պարտատոմսերը նախատեսված են բացառապես Բանկի սովորական, Բ և Գ դասի հաստատագրված տարեկան շահութաբաժնով արտոնյալ բաժնետոմսերի գործող բաժնետերերի, ինչպես նաև ՀՀ Կենտրոնական բանկի կողմից 13.05.2026թ. գրանցված բաժնետոմսերի ազդագրի շրջանակում իրականացված Բանկի սովորական բաժնետոմսերի լրացուցիչ թողարկման ընթացքում բաժնետոմսեր ձեռք բերած անձանց համար, որոնք ունեն և ձեռք են բերել առնվազն 2.600 հատ բաժնետոմս: Նշված ներդրողներն իրավունք ունեն ձեռք բերելու անժամկետ պարտատոմսեր՝ յուրաքանչյուր 2.600 հատ բաժնետոմսի հաշվով

		առավելագույնը 300 հատ անժամկետ պարտատոմս հարաբերակցությամբ: 2.600 հատը գերազանցող բաժնետոմսերի առկայության դեպքում անժամկետ պարտատոմսերի ձեռքբերման առավելագույն քանակն ավելանում է նույն համամասնությամբ՝ յուրաքանչյուր լրացուցիչ 8 հատ բաժնետոմսի հաշվով ներդրողը կարող է ձեռք բերել առավելագույնը 1 հատ անժամկետ պարտատոմս: - Միաժամանակ, պարտատոմսերի հետագա շրջանառության, փոխանցման, ինչպես նաև դրանցից բխող իրավունքների իրականացման նկատմամբ կիրառվում են Ծրագրային ազդագրով սահմանված բոլոր պայմանները՝ նույն ծավալով և իրավական ուժով, ինչ կիրառվում է Բանկի կողմից նշված ծրագրային ազդագրի շրջանակներում թողարկվող այլ անժամկետ պարտատոմսերի նկատմամբ: Սույն անժամկետ պարտատոմսերի երկրորդային շրջանառության նկատմամբ, բացի Ծրագրայի ազդագրի 2.3.12 կետով նախատեսված ընդհանուր դեպքերի, լրացուցիչ սահմանափակումներ նախատեսված չեն:
Այլ տեղեկություններ		Բանկի կողմից թողարկված անվանական անժամկետ պարտատոմսերով ներգրավված դրամական միջոցները երաշխավորված են Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի կողմից «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքով սահմանված չափով, կարգով և պայմաններով, բացառությամբ այն դեպքի, երբ մինչև օրենքի 5-րդ հոդվածով սահմանված հատուցման դեպքի ի հայտ գալը անվանական անժամկետ պարտատոմսերը Բանկի ֆինանսական վիճակի վատթարացման հիմքով սույն Ազդագրում նկարագրված կարգով և չափով փոխարկվել են Բանկի սովորական բաժնետոմսերի:
28.	Տվյալ դասի արժեթղթերի կարգավորվող շուկայում առևտրին թույլտվության առկայություն (նշվում է համապատասխան կարգավորվող շուկաների անվանումները, թույլտվության ամսաթիվը)	Արժեթղթերը դեռևս թույլատրված չեն կարգավորվող շուկայում առևտրին:
29.	Եթե առաջարկվող արժեթղթերի մասով հետագայում հայցվելու է կարգավորվող շուկայում առևտրին թույլտվություն, ապա նշվում է տեղեկություններ այդ մասին (շուկայի անվանումը, նաև դրույթ, որ առևտրին թույլտվության հայցը կարող է չբավարարվել, առևտրին թույլտվության սպասվող	Պարտատոմսերի տեղաբաշխման ավարտից հետո՝ հնարավորինս սեղմ ժամկետներում, Բանկը դիմելու է «Հայաստանի Ֆոնդային Բորսա» ԲԲԸ պարտատոմսերի ցուցակման համար: Պարտատոմսերի ցուցակման դիմումը կարող է նաև չբավարարվել:

	ամսաթիվը (հնարավորության դեպքում))	
30.	Արժեթղթի վարկանիշը	Արժեթղթերը վարկանշված չեն
31.	Արժեթղթերի դիմաց վճարներ կատարելու մեթոդները (պարբերականությունը, բանկային հաշիվները և այլն) և ժամկետները, ինչպես նաև արժեթղթերը ստանալու մեթոդները և ժամկետները, արժեթղթերի սեփականության վերաբերյալ քաղվածք ստանալու ձևը	Թողարկողի կողմից թողարկվող պարտատոմսերի ձեռքբերման համար իրավաբանական և/կամ ֆիզիկական անձիք կարող են վճարումը կատարել Յունիբանկ ԲԲԸ-ում բացված համապատասխան տարանցիկ հաշվեհամարին: Պարտատոմսերի ձեռքբերման համար ներդրողները պետք է լրացնեն և Բանկին պատշաճ կերպով առաքեն Պարտատոմսերի գնման պատվերը, որով հավաստում են պարտատոմսերի թողարկման պայմաններն ընդունելու իրենց պատրաստակամությունը և որով այդ պայմանները դառնում են ներդրողների համար պարտադիր: Պարտատոմսերի գնման պատվերի լրացումից հետո, սակայն ոչ ուշ քան նույն աշխատանքային օրվա ժամը 16:00-ը պարտատոմս ձեռք բերել ցանկացող անձը պետք է «Յունիբանկ ԲԲԸ-ում նախապես բացված տարանցիկ հաշվեհամարին կատարի վճարում պարտատոմսերի գնման պատվերում նշված համապատասխան քանակի պարտատոմսեր ձեռք բերելու դիմաց: Պարտատոմսերը թողարկողի կողմից առաքվելու են ներդրողների հաշիվներին համապատասխան գումարը գանձելու օրվանից հետո հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում (T+2 սկզբունքով): Պարտատոմսերի գնման պատվերը կհամարվի պատշաճ կերպով առաքված, եթե այն առաքվել է ստորև ներկայացված կապի միջոցներից որևէ մեկի միջոցով (կամ առձեռն՝ Բանկի գրասենյակ այցելելով) և ստացվել է հասցեատիրոջ կողմից առաքման ստացման հաստատում. Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Կենտրոն համայնք, Չարենցի փողոց, 12 շենք, թիվ 53 Յունիբանկ ԲԲԸ, Գանձապետարան Կամ էլեկտրոնային փոստ: broker@unibank.am Համապատասխան գնման պատվերը բավարարվելուց հետո ներդրողներն արժեթղթերի սեփականության վերաբերյալ քաղվածք կարող են ստանալ իրենց արժեթղթերի հաշիվը սպասարկող Պահառուից կամ Հաշվի Օպերատորից՝ Թողարկողից իրենց գնման պատվերների բավարարման մասին տեղեկացվելուց :

Թողարկողը պատասխանատու է սույն «Թողարկման վերջնական պայմաններում» ներառված տեղեկությունների համար: Թողարկողը հավաստիացնում է, որ սույն փաստաթղթում ներառված տեղեկությունները համապատասխանում են այն տեղեկություններին (ներկայացված ընդհանուր մեթոդաբանությանը), որոնք ներառված են ծրագրային ազդագրում, դրա լրացումներում, ինչպես նաև ճշգրիտ են (այնքանով, որքանով հայտնի են), և որևէ փաստ բաց չի թողնվել կամ խեղաթյուրվել:

Գագիկ Զաքարյան	**Խորհրդի նախագահ**	(ստորագրություն)	(ամսաթիվ) 29.06.2026թ
Գեորգի Պիսկով	**Խորհրդի անդամ**	(ստորագրություն)	(ամսաթիվ) 29.06.2026թ.
Կարինե Մինասյան	**Խորհրդի անդամ**	(ստորագրություն)	(ամսաթիվ) 29.06.2026թ
Վարդան Աթայան	**Խորհրդի անդամ**	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Ֆիլիպ Դելմոտ	**Խորհրդի անդամ**	(ստորագրություն)	(ամսաթիվ) 29.06.2026թ
Ռուբեն Ինջիկյան	**Խորհրդի անդամ**	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Արթուր Նախշիկյան	**Խորհրդի անդամ**	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Մեսրոպ Հակոբյան	**Վարչության նախագահ**	(ստորագրություն)	(ամսաթիվ) 29.06.2026թ
Արարատ Ղուկասյան	**Վարչության անդամ, Վարչության նախագահի առաջին տեղակալ**	(ստորագրություն)	(ամսաթիվ) 29.06.2026թ
Գոհար Գրիգորյան	**Վարչության անդամ, Ֆինանսական տնօրեն - Գլխավոր հաշվապահ**	(ստորագրություն)	(ամսաթիվ) 29.06.2026թ
Օվսաննա Առաքելյան	**Վարչության նախագահի առաջին տեղակալ, Իրավական սպասարկման և ժամկետանց պարտավորությունների հետբերման գծով տնօրեն**	(ստորագրություն)	(ամսաթիվ) 29.06.2026թ
Գուրգեն Ղուկասյան	**Վարչության նախագահի առաջին տեղակալ, Մանրածախ բիզնեսի զարգացման և վաճառքների տնօրեն**	(ստորագրություն)	(ամսաթիվ) 29.06.2026թ
Դավիթ Պետրոսյան	**Վարչության նախագահի առաջին տեղակալ, Կորպորատիվ բիզնեսի զարգացման և վաճառքների տնօրեն**	(ստորագրություն)	(ամսաթիվ) 29.06.2026թ
Վաղինակ Ստեփանյան	**Վարչության անդամ, Վարչության նախագահի տեղակալ նախագծերի և ստանդարտների ներդրման գծով**	(ստորագրություն)	(ամսաթիվ) 29.06.2026թ
Սերգեյ Քոչարյան	**Վարչության անդամ, Ռիսկերի կառավարման գծով տնօրեն**	(ստորագրություն)	(ամսաթիվ) 29.06.2026թ
Արթուր Ապերյան	**Վարչության անդամ, Օպերացիոն սպասարկման և տեղեկատվական համակարգերի տնօրեն**	(ստորագրություն)	(ամսաթիվ) 29.06.2026թ

Հավաստիացնում եմ, որ Վերջնական պայմանները ստորագրված են վերոհիշյալ անձանց կողմից

Վարչության նախագահ - Գործադիր տնօրեն՝ **Մեսրոպ Հակոբյան**